Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն 2

Հանրապետական եռակողմ հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստի

2016 թվական, սեպտեմբերի 24, ժամը՝ 11:00

Նախագահում էր ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար, Հանձնաժողովի նախագահ Ա. Ասատրյանը

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի անդամներ՝

Տիգրան Բարսեղյան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Սուրեն Քրմոյան	ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Բորիս Խարատյան	Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահի տեղակալ
Շմավոն Մկրտչյան	Առևտրի, հասարակական սննդի, սպառկոոպերացիայի և ձեռներեցության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
Անահիտ Ասատրյան	Պետհիմնարկների, ՏԻՄ-երի և հասարակական սպասարկման աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
Շուշանիկ Բարսեղյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության նախագահի տեղակալ
Նաիրա Պապոյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության Արարատի գործատուների տարածքային միության նախագահ
Պողոս Գաբրիելյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության Արագածոտնի գործատուների տարածքային միության նախագահ
Էդուարդ Կիրակոսյան	«Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միություն» ՀԿ գործադիր տնօրեն

Հանձնաժողովի անդամներին մշտական փոխարինողներ՝

Սամվել Սողոմոնյան	ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի անձնակազմի կառավարման վարչության պետ (ՀՀ

Մուտք Ելք/39074-16
«14» 10 16.
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
Հանրային ծառայությունների ընդհանուր բաժին

	առողջապահության նախարարի տեղակալ, Հանձնաժողովի անդամ Տ. Սահակյանի փոխարեն)
Ալբերտ Բաբայան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի գործարար միջավայրի բարելավման վարչության պետ (ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ, Հանձնաժողովի անդամ Հ. Հովհաննիսյանի փոխարեն)
Սրապիոն Առաքելյան	Թեթև արդյունաբերության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ (Արդյունաբերության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ, Հանձնաժողովի անդամ Հ. Դանիելյանի փոխարեն)
Գայանե Արմաղանովա	Առողջապահության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ (Մշակույթի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ, Հանձնաժողովի անդամ Ժ. Թորոսյանի փոխարեն)

Հրավիրվածներ՝

Արայիկ Պետրոսյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի առաջին տեղակալ
Գեղամ Իսրայելյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի օգնական
Արտակ Մանգասարյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Զբաղվածության պետական գործակալության պետ
Թադևոս Ավետիսյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչության պետ
Անահիտ Մարտիրոսյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատազմի միջազգային համագործակցության և զարգացման ծրագրերի վարչության պետ
Անուշ Դանիելյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի մամուլի քարտուղար
Սիրանուշ Զաքարյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնի պետ

Ռիմա Պետրոսյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի վերլուծության և մոնիթորինգի վարչության վերլուծության բաժնի պետ
Մարինե Ժամկոչյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության գործադիր տնօրեն
Սամվել Գևորգյան	«Բիզնեսի աջակցության կենտրոն» ՍՊԸ-ի հիմնադիր տնօրեն
Կարինե Մադոյան	Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի աշխատակազմի սոցիալ-տնտեսական և աշխատանքի պաշտպանության բաժնի պետ
Էլլադա Մելքումյան	Պետհիմնարկների, ՏԻՄ-երի և հասարակական սպասարկման աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահի օգնական

Հանձնաժողովի քարտուղար՝

Արփինե Սարգսյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչության աշխատանքի բաժնի գլխավոր մասնագետ

Բացակայում էին՝

Հանձնաժողովի անդամներ

Տիգրան Սահակյան	ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ
Հովհաննես Հովհաննիսյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Գագիկ Մակարյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության նախագահ
Համլետ Դանիելյան	Արդյունաբերության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
Ժանետա Թորոսյան	Մշակույթի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ

Օրակարգի նախագծում ընդգրկված էին հետևյալ հարցերը.

1. **Զբաղվածության կարգավորման 2017 թվականի պետական ծրագրի նախագծի և դրա վերաբերյալ հանրապետական համաձայնեցման կոմիտեի դիրքորոշման քննարկում և եզրակացության ներկայացում:**
2. **ԱՄԿ-Հայաստան համագործակցության «Արժանապատիվ աշխատանք» նոր ծրագրի մշակման կազմակերպչական հարցերի քննարկում և աշխատանքային խմբի կազմի ձևավորում:**
3. **Այլ հարցեր:**

Նիստի օրակարգի նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Ըստ հերթականության ներկայացվեցին օրակարգի հարցերը:

1. Զբաղվածության կարգավորման 2017 թվականի պետական ծրագրի նախագծի և դրա վերաբերյալ հանրապետական համաձայնեցման կոմիտեի դիրքորոշման քննարկում և եզրակացության ներկայացում:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչության պետ Թ. Ավետիսյանը հակիրճ ներկայացրեց Զբաղվածության կարգավորման 2017 թվականի պետական ծրագրի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ): Նշվեց, որ Նախագիծը սահմանված կարգով դրվել է պաշտոնական շրջանառության: Այն կարծիքի է ուղարկվել նաև սոցիալական գործընկերներին: Ստացվել են բոլոր շահագրգիռ գերատեսչությունների կարծիքները, և Նախագծում ամփոփվել են նաև սոցիալական գործընկերների կողմից ներկայացված առաջարկությունները: Նախագիծը մշակվել է «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքով սահմանված կառուցվածքին համապատասխան: Նշվեց, որ 2016 թվականին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրամանով ստեղծվել է մասնագիտական աշխատանքային խումբ, որն այցելություններ է կատարել Զբաղվածության պետական գործակալության բոլոր 51 կենտրոններ: Մանրամասն ուսումնասիրվել է ամեն մի աշխատաշուկան առանձին, արվել է վերլուծություն, տրվել գնահատական, վեր են հանվել խնդիրները, այդ թվում՝ ծրագրերի ֆինանսական և ոչ ֆինանսական կատարողականների իմաստով: Այդ վերլուծությունները ևս օգտագործվել են Նախագծի մշակման շրջանակներում: Նշվեց նաև, որ արդեն 2-րդ տարին է, որ օրենսդրությամբ սահմանված կարգով նախագծի մաս է կազմում նախորդ տարվա ծրագրերի մոնիթորինգի և գնահատման հաշվետվությունը:

Այնուհետև համառոտ ներկայացվեցին զբաղվածության ծրագրերը: Նշվեց, որ դրանք թվով 13 հիմնական ծրագրերն են: Բաժանվում են երեք խմբի. 1-ին խումբը կայուն զբաղվածություն ապահովող, 2-րդը՝ ինքնազբաղվածություն ապահովող, 3-րդը՝ ժամանակավոր զբաղվածություն ապահովող ծրագրեր են: Ծրագրերից 2-ը՝ անասնապահության միջոցով կայուն զբաղվածության խթանման ծրագիրը և վարձատվող հասարակական աշխատանքներ ծրագիրը, փորձարկվել են այս տարի: Այս երկու ծրագրերի ընթացիկ գնահատումները հնարավորություն են ստեղծել 2017 թվականի նախագծում առաջարկելու այս ծրագրերի ֆինանսական միջոցների էական աճ:

Նախագծով առաջարկվող հաջորդ փոփոխությունը վերաբերում է գյուղատնտեսական սեզոնային զբաղվածության միջոցով ժամանակավոր զբաղվածության ապահովման ծրագրին:

Նշվեց, որ բյուջեի գրեթե կեսը նախատեսվում է այս ծրագրի համար: Ծրագրի կատարողական արդյունավետության գնահատման միավորը էական աճ է ունեցել:

Միաժամանակ նշվեց, որ փոփոխություն է նախատեսվում նաև կազմակերպման գործընթացներում: Վերջինս ենթադրում է, որ պետք է լինի մասնագիտական խորհրդատվական կազմակերպություն, որը կուղեկցի այս ծրագրի ողջ ընթացքը: Այս նպատակով նախատեսված է շուրջ 45 միլիոն դրամ, որպեսզի ուղեկցող կազմակերպությունը շուրջ 810 միլիոն դրամի իրականացվող ծրագրերի մասնագիտական ուղեկցություն իրականացնի, բնականաբար նաև Զբաղվածության պետական գործակալության անմիջական մասնակցությամբ:

Հաջորդ փոփոխությունն այն է, որ մոնիթորինգի և գնահատման արդյունքներով գործող ծրագրերի շրջանակներում վերաբաշխում է առաջարկվել: Օրինակ՝ ուսուցման ծրագրից, գործատուներին գործազուրկների այցելության ծրագրից, ոչ պետական կազմակերպությունների միջոցով զբաղվածության ապահովման ծրագրից միջոցները տեղափոխվել են այնպիսի ծրագրեր, որոնք ունեն աճող կայուն զբաղվածության միտում: Դրանք են, օրինակ, անասնապահության ծրագիրը, փոքր բիզնեսին միանվագ դրամական հատուցման ծրագիրը: Այս փոփոխությունների արդյունքում հնարավոր է դարձել բարձրացնել կայուն զբաղվածության միջին գործակիցը և խթանել պահանջարկված և՛ փորձարկվող, և՛ գործող ծրագրերը, որոնք շահառուների վրա կարողանում են ուղիղ, անմիջական ազդեցություն ունենալ: Նշվեց նաև, որ հիմնականում այն բնակավայրերում, որտեղ կա թափուր աշխատատեղերի շատ ավելի մեծ պակաս, քան միջին հանրապետականն է, (դրանք հիմնականում բարձր լեռնային, սահմանամերձ բնակավայրերն են) փորձ է արվում ինքնազբաղվածության ծրագրերի միջոցով հասնել կայուն զբաղվածությանը, և գյուղատնտեսական սեզոնային զբաղվածության միջոցով նաև՝ նրանց կայուն եկամտի ապահովմանը:

Վերջում նշվեց նաև, որ մինչև Հանրապետական եռակողմ հանձնաժողովում ներկայացվելը նախագիծը ներկայացվել է Հանրապետական համաձայնեցման կոմիտեում և ստացվել է նաև Հանրապետական համաձայնեցման կոմիտեի դրական դիրքորոշումը:

Զեկուցումից հետո ներկաների կողմից ներկայացվեցին կարծիքներ և հարցեր:

Ս. Սողոմոնյանին հետաքրքրում էր, թե կա արդյոք կայուն զբաղվածության ցուցանիշի շեմ, որից ցածր ցուցանիշով ծրագրերը ընդհանրապես չպետք է ներգրավվեն ամենամյա ծրագրում: Ս. Սողոմոնյանը նշեց, որ նայելով փաստաթուղթը կարելի է տեսնել, որ աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայություններից օգտվելու համար ծրագիր կա, որի կայուն զբաղվածության ցուցանիշը բավականին ցածր է: Անցյալ տարի այդ ծրագրի կատարողականը եղել է զրո՝ ծրագրով ոչ մի շահառու չի եղել: Սակայն, այս տարի նորից այդ ծրագիրը դրված է: Այս առումով հարց հնչեցվեց, որ եթե ծրագիրը չի աշխատում, ապա ինչու է այն այս տարի ևս դրված Նախագծում:

Ս. Սողոմոնյանի կողմից բարձրացված հարցերի առնչությամբ Թ. Ավետիսյանը նշեց, որ օրենքով, ինչպես նաև ՀՀ կառավարության որոշումներով հստակ սահմանված է, որ յուրաքանչյուր ծրագիր պետք է ենթարկվի ընթացիկ և տարեկան մոնիթորինգի և գնահատման, և այն ծրագրերը, որոնք շարունակության տեսանկյունից գնահատվում են նպատակահարմար կարող են տեղ գտնել հաջորդ տարվա ամենամյա պետական ծրագրում:

Թ. Ավետիսյանի կողմից նշվեց, որ կայուն զբաղվածության ցուցանիշը որոշվում է միավորով: Յուրաքանչյուր ծրագրի համար մշակված է մոնիթորինգի և գնահատման անձնագիր՝ հստակ ցուցանիշներով, որոնցից յուրաքանչյուրն ունի իր կշիռն ու միավորը: Ամբողջական

հաշվելուց հետո այդ բազմաթիվ ցուցանիշների՝ ըստ կշիռների գնահատումը հանրագումարի է բերվում, տրվում է միավոր, որը կարող է 0-ից 100 լինել:

Անդրադառնալով ոչ պետական կազմակերպությունների միջոցով իրականացվող ծրագրին՝ Թ. Ավետիսյանը նշեց, որ դա խնդիր է ներդրման օրվանից: Սակայն, այս ծրագրի պարագայում շատ կարևոր է գաղափարը. նախ դրա հիմքում դրված է պետական և ոչ պետական հատվածի համագործակցությունը, ինչը զբաղվածության քաղաքականության հիմնական սկզբունքներից մեկն է, և 2-րդ՝ ծրագրով հնարավորություն է տրվում աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպությունների ներուժն օգտագործել ի նպաստ զբաղվածության պետական կարգավորման ծրագրերի արդյունավետության: Այս իմաստով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հանձնարարականով ուսումնասիրվում է նաև միջազգային փորձը՝ 2017 թվականին այն նոր մեխանիզմներով իրականացնելու համար:

Վերոնշյալի առնչությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար, Հանձնաժողովի նախագահ Ա. Ասատրյանը նշեց, որ այդ ծրագրի գաղափարն ինքնին շատ լավն է: Սակայն, խնդիրն այն է, որ այդ համագործակցությունը դեռևս առարկայական չէ: Նա նշեց, որ անհրաժեշտ է հստակ ախտորոշել, գնահատականներ ունենալ, գտնել այն մեխանիզմները և լուծումները, որոնք թույլ կտան գործարկել ծրագիրը: Այս տարի դարձյալ այն ամենամյա ծրագրում ներառելով՝ մեկ անգամ ևս քննարկելու և համապատասխան լուծումներ գտնելու հնարավորություն է ստեղծվում: Եթե ծրագիրը գործարկելու հնարավոր լուծումները գտնվեն, ապա այն հաջորդ տարի նորից կներառվի ամենամյայում:

Վերոնշյալ ծրագրի առնչությամբ Շ. Բարսեղյանի կողմից նույնպես նշվեց, որ միջազգային փորձը ևս ցույց է տալիս, որ պետությունը զբաղվածության ծրագրերի որոշակի մասը պետք է իրականացնի մասնավոր գործակալությունների միջոցով: Ուստի վերջիններիս հետ անպայման պետք է համագործակցել:

Շ. Բարսեղյանը կարևորեց նաև զբաղվածության ծրագրերի մասին իրազեկման խնդիրը: Ծրագրերը իսկապես շատ լավն են, սակայն դրանց մասին իրազեկումն անհրաժեշտ մակարդակով չի իրականացվում: Նա նշեց նաև, որ իրենց կողմից առաջարկվել էր ծրագրերի վերաբերյալ տրամադրել տեղեկատվություն շահագրգիռ անձանց և հասարակության ներկայացուցիչներին՝ հանրային և հանրապետության հեռավոր մարզերում հեռարձակվող հեռուստաընկերություններով, քանի որ հեռուստատեսությունը հանրապետության հեռավոր շրջաններում տեղեկատվության հիմնական աղբյուրն է:

Ս. Քրմոյանը, անդրադառնալով զբաղվածության ծրագրերի մասին իրազեկվածության խնդրին, նշեց, որ թերևս կարելի է նշել, որ Զբաղվածության պետական գործակալությունն այն կառույցներից է, որի կողմից իրականացվող գործունեության մասին բավարար չափով իրազեկվում է տեղեկատվության տարածման տարբեր միջոցներով:

Հանձնաժողովի նախագահ Ա. Ասատրյանը նշեց, որ այստեղ խնդիրը, կարելի է ասել, ծրագրերի բովանդակությանը մանրամասն ծանոթ լինելու մեջ է: Նա նշեց նաև, որ դա ևս քննարկման առարկա կարելի է դարձնել և համատեղ գտնել համապատասխան լուծումներ: Որպես այդպիսիք Ա. Ասատրյանը դիտարկեց, օրինակ զբաղվածության կենտրոններում պարբերաբար հավաքներ անցկացնելը, օրեր նշանակելը և ծրագրերի վերաբերյալ մասնագիտական պարզաբանումներ տալը:

Ծրագրերի մասին իրազեկվածության խնդրի վերաբերյալ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Զբաղվածության պետական գործակալության պետ Ա. Մանգասարյանը նշեց, որ շահառուների առումով նման խնդիր գրեթե չկա: Հիմնականում խնդիր է գործատուների իրազեկվածությունը: Գործատուների միություններում գրանցված են բազմաթիվ գործատուներ: Այդ միություններին Զբաղվածության պետական գործակալությունը բազմիցս առաջարկել է, եթե վերջիններս կազմակերպեն գործատուների համար հավաքներ, ապա Զբաղվածության պետական գործակալության աշխատողները պատրաստ են զբաղվածության ծրագրերի մասին նրանց ներկայացնել մանրամասն տեղեկատվություն:

Ծրագրերի մասին իրազեկվածության խնդիրը կարևորվեց նաև Ս. Առաքելյանի կողմից: Նա միաժամանակ տեղեկացրեց, որ Զբաղվածության պետական գործակալության և Գյումրիի զբաղվածության տարածքային կենտրոնի կողմից կազմակերպված աշխատանքի տոնավաճառում Հայաստանի թեթև արդյունաբերության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ՃՀՄ-ի աջակցությամբ և մասնակցությամբ «Սասստեքս» և «Լենտեքս» ՍՊԸ-ներում գրանցվել է շուրջ 350 գործազուրկ և աշխատանք փնտրող:

Բ. Խարատյանն անդրադարձավ հանրապետությունում գործազրկության բարձր մակարդակի խնդրին՝ նշելով, որ բնակչության թվաքանակի նվազման ֆոնի վրա այն կամ աճում է, կամ մնում է նույնը: Այն բավականին բարձր է թե՛ ԱՊՀ երկրների, թե՛ ԵՄ երկրների հետ համեմատած:

Բ. Խարատյանի մտահոգության առնչությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար, Հանձնաժողովի նախագահ Ա. Ասատրյանը նշեց, որ միայն զբաղվածության ծրագրերով չէ, որ պետք է լուծվի այս խնդիրը: Սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող ծրագրերի խնդիրն է մեղմել գործազրկության հետ կապված սոցիալական լարվածությունը և աջակցել աշխատաշուկայում անմրցունակներին:

Ս. Քրմոյանը նշեց, որ ՀՀ արդարադատության նախարարությունը «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն է ներկայացրել, որը մշակվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համատեղ: Նա նշեց, որ Զբաղվածության կարգավորման 2017 թվականի պետական ծրագրի նախագծի վերաբերյալ բովանդակային առաջարկություն չունի, սակայն ունի մեկ խմբագրական առաջարկ, որը պայմանավորված է «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքում նախատեսվող վերևում նշված փոփոխությամբ: Խոսքը վերաբերում է պատիժը կրող անձանց զբաղվածության խնդիրներին: Առաջարկվեց, որ անմրցունակների և աշխատանք փնտրող անձանց մեջ ամենամյա ծրագրում հստակ շեշտադրվեն պատիժը կրող անձինք կամ դատապարտյալները: Ներկայումս նրանք ծրագրի շահառու են համարվում ազատման պահից, այսինքն համարվում են անմրցունակ և աշխատանք փնտրող: ՀՀ արդարադատության նախարարության կողմից առաջարկվում է, եթե հնարավոր է ծրագրում խմբագրական փոփոխության արդյունքում նրանք շահառու համարվեն ազատվելուց վեց ամիս առաջ: Ս. Քրմոյանը միաժամանակ նշեց, որ իրենց կողմից ներկայացվող առաջարկությունը կներկայացնեն գրավոր ձևակերպմամբ:

Վերոնշյալ քննարկումների արդյունքում օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ Հանձնաժողովը որոշեց.

1.1. Քննարկելով Զբաղվածության կարգավորման 2017 թվականի պետական ծրագրի նախագիծը և դրա վերաբերյալ հանրապետական համաձայնեցման կոմիտեի դիրքորոշումը՝ տալ դրական եզրակացություն:

2. ԱՄԿ-Հայաստան համագործակցության «Արժանապատիվ աշխատանք» նոր ծրագրի մշակման կազմակերպչական հարցերի քննարկում և աշխատանքային խմբի կազմի ձևավորում:

Օրակարգի 2-րդ հարցը ներկայացրեց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի միջազգային համագործակցության և զարգացման ծրագրերի վարչության պետ Ա. Մարտիրոսյանը:

Վերջինս հակիրճ տեղեկատվություն ներկայացրեց ԱՄԿ-Հայաստան համագործակցության «Արժանապատիվ աշխատանք» նոր ծրագրի մշակման գործընթացի հետ կապված: Նշվեց, որ 2016 թվականին ԱՄԿ տարեկան համաժողովին մասնակցելու նպատակով Ժնև մեկնած հայկական եռակողմ պատվիրակությունը այցի ընթացքում հանդիպել և բանակցություններ է վարել ԱՄԿ ղեկավարների հետ: Արդյունքում որոշվել է, որ ԱՄԿ-ն Հայաստանում կվերսկսի «Արժանապատիվ աշխատանք» ծրագրի իրականացումը: Նախորդ ծրագիրը ավարտվել էր դեռևս 2013թ. և նորը չէր վերսկսվել: Նշվեց, որ ծրագիրը նախատեսվում է մշակել չորս տարի ժամկետի (2017-2020թթ.) համար, և, քանի որ այն բավական երկար գործընթացներ է անցնում, աշխատանքներն արդեն պետք է սկսել: Ծրագրի մշակման նպատակով պետք է ստեղծվի եռակողմ աշխատանքային խումբ՝ կողմերի հավասար թվով ներկայացուցիչներից: Հաշվի առնելով, որ դա ազգային ծրագիր է՝ ԱՄԿ կարգավորումների համաձայն, խումբը պետք է ղեկավարվի ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից:

Նշվեց, որ սոցիալական գործընկերներին ԱՄԿ-ի կողմից արդեն տրամադրվել է «Արժանապատիվ աշխատանք» ծրագրի մշակման մեթոդական ուղեցույցը, որում ներկայացված է, թե ծրագիրը ինչ պահանջների պետք է համապատասխանի: Նշվեց նաև, որ Գործատուների հանրապետական միության կողմից թեկնածուները ներկայացվել են: Մյուս երկու կողմերի կողմից թեկնածուները ներկայացվելուց հետո խումբն ամբողջությամբ կձևավորվի և կսկսվեն ծրագրի մշակման աշխատանքները:

Միաժամանակ նշվեց, որ «Արժանապատիվ աշխատանք» ծրագիրը պետք է համապատասխանի ԱՄԿ «Արժանապատիվ աշխատանք» օրակարգին, որն ունի 4 հիմնական ուղղություն. զբաղվածություն, սոցիալական ապահովություն, սոցիալական երկխոսություն և աշխատանքային իրավունքներ: Այն պետք է հիմնված լինի ազգային ոլորտային ռազմավարական փաստաթղթերի և առաջնահերթությունների վրա: Ծրագրի մշակման համար պետք է հիմք ընդունվեն նաև ՄԱԿ-ի երկու փաստաթղթեր՝ Կայուն զարգացման նպատակները և ՄԱԿ-ի զարգացման աջակցության շրջանակը, որը ՀՀ կառավարության կողմից ստորագրվել է 2016թ.:

Ներկայացվածից հետո Շ. Բարսեղյանի կողմից նշվեց, որ Հայաստանի գործատուների հանրապետական միությունը մշակել է ծրագրի բովանդակության վերաբերյալ առաջարկություններ:

Հանձնաժողովի նախագահի, ինչպես նաև ներկաների կողմից առաջարկվեց, որ ծրագրի կոնկրետ բովանդակությանն առնչվող հարցերը կողմերը քննարկեն աշխատանքային խմբում, որից հետո մշակված, ավարտուն տեսքի բերված ծրագիրը կներկայացվի և կքննարկվի նաև Հանձնաժողովում:

Հանձնաժողովի նախագահի կողմից ներկայացված առաջարկությունն ընդունվեց ներկաների կողմից:

Ամփոփելով վերոգրյալը՝ Հանձնաժողովի նախագահ Ա. Ասատրյանը պետական կողմի ներկայացուցիչներին առաջարկեց աշխատանքային խումբ ձևավորելու համար տալ առաջարկություններ՝ ներկայացնելով կա՛մ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմ, կա՛մ Հանձնաժողովի քարտուղարություն: Վերջնական աշխատանքային խումբը ձևավորելուց հետո սկսել աշխատանքները:

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ Հանձնաժողովը որոշեց՝

2.1. Ձևավորել աշխատանքային խումբ՝ ԱՄԿ-Հայաստան համագործակցության «Արժանապատիվ աշխատանք» նոր ծրագրի մշակման համար և սկսել ծրագրի մշակման աշխատանքները:

2.2. Մշակված ծրագրի նախագիծը քննարկել Հանձնաժողովում:

Օրակարգի հարցերի ներկայացումից ու քննարկելուց հետո Ս. Սողոմոնյանի կողմից բարձրացվեց հետևյալ հարցը.

Հանձնաժողովի նախորդ նիստում ՀՀ առողջապահական պետական տեսչությանն առնչվող հարցի (ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի առողջապահական պետական տեսչության կողմից 2015 թվականին աշխատանքի ոլորտում իրականացված աշխատանքների մասին տեղեկատվության ներկայացում: Տեսչության գործառույթների բարելավմանն ուղղված սոցիալական գործընկերների համատեղ աշխատանքների իրականացման անհրաժեշտությունը, ԱՄԿ տեխնիկական և փորձագիտական աջակցությամբ) շրջանակներում կայացված որոշման համաձայն՝ ՀՀ առողջապահության նախարարության կողմից ներկայացվել են ՀՀ առողջապահական պետական տեսչության գործառույթների բարելավման վերաբերյալ կոնկրետ առաջարկություններ, ինչպես նաև ընթացիկ իրավիճակը:

Ս. Սողոմոնյանը ցանկացավ իմանալ, թե ինչ ընթացք են ունեցել իրենց կողմից ներկայացված առաջարկությունները:

Հանձնաժողովի քարտուղար Ա. Սարգսյանը տեղեկացրեց, որ ՀՀ առողջապահության նախարարությունից ստացված առաջարկություններն ուղարկվել են սոցիալական գործընկերներին, ինչպես նաև Հանձնաժողովի՝ պետական կողմը ներկայացնող անդամներին կարծիքի: Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի կողմից դիտողություններ չեն ներկայացվել: Հայաստանի գործատուների հանրապետական միությունը ներկայացրել է իր դիտարկումները: Պետական կողմից դեռևս չի ստացվել ՀՀ արդարադատության նախարարության կարծիքը: Վերջինս ստացվելուց հետո, Հանձնաժողովում կայացված որոշման համաձայն՝ նշված առաջարկությունները և դրանց վերաբերյալ համապատասխան դիտարկումները ամբողջական փաթեթով կներկայացվեն Տեսչական բարեփոխումների խմբին:

Բ. Խարատյանի կողմից նշվեց, որ յուրաքանչյուր նիստից առաջ իրենք Հանձնաժողովի քարտուղարությունից գրություն են ստանում՝ Հանձնաժողովի նիստի օրակարգում ընդգրկելու համար առաջարկություններ ներկայացնելու վերաբերյալ: Վերջինս առաջարկեց, որ Հանձնաժողովի նիստերի օրակարգերը ձևավորվեն ելնելով Հանրապետական կոլեկտիվ

պայմանագրի կիրարկումն ապահովող գործողությունների ծրագրից և կողմերին նիստերի օրակարգերում ընդգրկելու առաջարկություններ ներկայացնելու նամակ չուղարկվի:

Հանձնաժողովի անդամ Անահիտ Ասատրյանը անդրադարձավ պետական աշխատողներին տրվող սոցփաթեթի 2017-2019 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրում «հանգստի բաղադրիչի» կասեցման վերաբերյալ հայտարարության կապակցությամբ ճյուղային արհմիության՝ ՀՀ վարչապետին ուղղված նամակին:

Նշված հարցի կապակցությամբ Հանձնաժողովի նախագահ Ա.Ասատրյանը պարզաբանեց, որ միայն 2017 թվականի պետական բյուջեի հաստատումից հետո պարզ կլինի սոցփաթեթում ներառված ծառայություններից օգտվելու ընթացակարգը:

Անահիտ Ասատրյանը ներկաներին տեղեկացրեց, որ 2016 թվականին լրացել է Պետական հիմնարկների աշխատողների արհմիության ստեղծման 85 տարին: Իրենց արհմիությունը այս նպատակով միջոցառում է կազմակերպել, որը տեղի է ունենալու հոկտեմբերի 7-ին, ժամը 15.00-ին: Նա նշեց, որ բոլորին հրավիրում է մասնակցելու միջոցառմանը և հատկապես կարևորեց իշխանության ներկայացուցիչների մասնակցությունը:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ԱՍԱՏՐՅԱՆ**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ **Ա. ՍԱՐԳՍՅԱՆ**